

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑ» ԵՐԿՈՒՄ

Միջին հայերենի փոխառությունների ուսումնասիրության համար անփոխարինելի սկզբնաղբյուր է 13-րդ դարի հայ թարգմանական գրականության լավագույն նմուշներից մեկը՝ «Գիրք վաստակոց» երկը։ «Գեոպոնիկայի» հունարեն տարբերակից կատարված այս թարգմանությունը նախատեսված է գյուղատնտեսությանը զբաղվողների համար և ընդգրկում է գյուղատնտեսական տարբեր բնագավառների վերաբերող շատ հարցեր։

Ծիշտ է նկատվել, որ «Գիրք վաստակոցի» նման աշխատության թարգմանության կարիք կարող էր զգացվել միայն գյուղատնտեսական բարձր աստիճանի հասած ժամանակ։ Միջնադարում ճիշտ այդպիսի վերելքի մեջ էր Կիլիկյան Հայաստանը, որտեղ կենտրոնացած էր հայ ազգի մտավոր ու քաղաքական կյանքը։ Այս շրջանում միջին հայերենի բառապաշարը հարստանում է տարբեր լեզուներից, մասնավորապես արաբերենից, պարսկերենից, հունարենից, լատիներենից, թուրքերենից, ֆրանսերենից կատարված փոխառություններով։ Դրանց թվում են ինչպես գիտական նշանակություն ունեցող բազմաթիվ բառեր ու տերմիններ, որոնք հիմնականում գրական ճանապարհով են լեզու մուտք գործել, այնպես էլ առօրյա կյանքին վերաբերող հասկացություններ, որոնք էլ բանավոր ուղիով են ներթափանցել։ Եթե միջին հայերենի շրջանում կատարված փոխառությունները վերաբերում էին պետության, կրոնի, իրավաբանության ու բժշկության ոլորտին, ապա «Գիրք վաստակոցում» տեղ գտած բառերը առնչվում են բուսականությանը, երկրագործությանը և առօրյա տնտեսությանը։

Պարսկերենից փոխառված բառերը քանակապես զիջում են միայն արաբերենին (100 բառ), չնայած այն բանին, որ հայերենն ամենաշատը ազդվել է պարսկերենից։ Իսկ դա պատահական չէ, քանի որ հայ-պարսկական հարաբերությունները սկսվել են անհիշելի ժամանակներից։ Զնուց ի վեր Հայաստանը սահմանակից է եղել Պարսկաստանի հետ, մի հանգամանք, որը մեծ դեր է խաղացել երկու ժողովուրդների և նրանց մշտական շփման գործում։ Ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը, հայ-պարսկական շփումը, որ մերթ օրեթուխանալով, մերթ օրեթուխանալով ընդգրկել է երբեմն ողջ Հայաստանը, երբեմն էլ մասնակիորեն որոշ շրջաններ, շարունակվել է մեր ողջ պատմության ընթացքում և շարունակվում է մինչև այսօր¹։ Բացի այդ, պարսկերենը այն եզակի լեզուն է, որից հայերենը բառեր է փոխառել իր գոյության բոլոր շրջաններում՝ հնագույն ժամանակներից սկսած։

Իրանագիտության մեջ ընդունված է պարսկերենը բաժանել երեք փուլի՝ հին, միջին և նոր։ Հին պարսկերենը ընդգրկում է մ.թ.ա. IV—III դարերը և ներառում է մի շարք լեզուներ (ավեստերեն, մարերեն, սակերեն, սկյութերեն)։ Միջին պարսկերենի փուլը սկիզբ է առնում մ.թ.ա. III դարից և տևում է մինչև մ.թ. VIII—IX դարերը։ Այս փուլն առանձնանում է իրանական լեզուների բազմազանությամբ և տարբերակվածությամբ (միջին պարսկերեն, պարթևերեն, սողդերեն, սակերեն)։ Հայերենի պարսկական փոխառությունների ճնշող մեծամաս-

նությունը գալիս է հենց միջին պարսկերենից: Պրանում դեր է խաղացել այն հանգամանքը, որ այս շրջանում Հայաստանում պարբերաբար իշխել են իրանական ծագման թագավորներ: Բացի այդ, մեր երկիրը գտնվել է պարթևների, ապա Սասանյան տիրապետության տակ: Նոր պարսկերենը ընդգրկում է մ.թ. VIII–IX դարերից մինչև մեր օրերը: Այս շրջանում տարածքային սահմանների ընդարձակվելու պատճառով նոր պարսկական լեզուների թիվը հասնում է քառասունի: Այդ լեզուներն էլ ըստ տարածքային և քերականական հատկանիշների բաժանվում են երկու խմբի՝ արևմտաիրանական (նոր պարսկերեն, տաջիկերեն, քրդերեն, թաթարերեն, բելուջերեն և այլն) և արևելաիրանական (աֆղաներեն, օսերեն, յաղոնբերեն և այլն): Սակայն նոր իրանական լեզուների՝ հայերենի վրա ունեցած ազդեցության մասին խոսելիս նկատի է առնվում միայն նոր պարսկերենը, մասամբ էլ՝ քրդերենը:

Յր. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմության» (Եր., 1940, հ. 1, էջ 240–292) ընդհանուր առմամբ նշում է 1405 պարսկական փոխառություններ, որոնք ընդգրկում են պարսկերենի զարգացման բոլոր շրջանները, ընդ որում դրանց մեծ մասը փոխ է առնվել գրաբարի շրջանում՝ հին և միջին պարսկերենից և արմատավորվել հայերենում՝ կազմելով լեզվի հիմնական բառաֆոնդի անքակտելի մասը: Այդ փոխառություններից զգալիորեն տարբերվում են միջին հայերենի շրջանում կատարված փոխառությունները, որոնց աղբյուրը նոր պարսկերենն է: Վերջիններս հիմնականում չեն արմատացել մեր լեզվում, քանի որ իբրև օտար են գիտակցվել:

Միջին գրական հայերենը վկայում է 600 պարսկական բառեր, որոնք գրաբարով չեն ավանդվել և գալիս են նոր պարսկերենից:

Ինչպես գիտենք, միջին հայերենը իբրև գրական և պետական լեզու ձևավորվել է Կիլիկիայում, որը, Պարսկաստանից հեռու լինելով, անմիջական շփման հնարավորություն չէր տալիս: Պարսկերեն բառերը լեզու են թափանցել Հայաստանից եկող բնակչության, առևտրական և պաշտոնյա պարսիկների միջոցով:

«Գիրք վաստակոցում» տեղ գտած շուրջ հինգ տասնյակ պարսկական փոխառությունները, որոնք կիրառման հաճախականությամբ արաբերենից հետո երկրորդ տեղում են, հիմնականում ժողովրդական բնույթի փոխառություններ են, որոնք գործածվել են միջին հայերենի խոսակցական տարբերակներում և կենսունակ են նաև այսօրվա խոսակցական լեզվում: Այդ բառերը գալիս են նոր պարսկերենից և արձանագրված են միջին հայերենի բառարաններում: Բացառություն է կազմում միայն երեք բառ, որոնցից երկուսը՝ *ահոկ* (34) < *āhōk* և *մարդպան* (19) < *mardpān*, առնչվում են պահլավերենի հետ, իսկ երրորդը՝ *վզեան/վզեն* (41,16) < *vizyāna*՝ հին պարսկերենի հետ: Այստեղ *ահոկ* բառից կազմված ենք գտնում *ահոկել* (34) «վճասել» և *ահոկութիւն* (164) «վճաս» բառերը որոնք բնորոշ են միջին հայերենին:

Պարսկական փոխառությունները ներկայացնում ենք ըստ կիրառության հաճախականության՝ առանձնացնելով ութ իմաստային խումբ.

1. **Բուսանուններ.** պարսկական փոխառությունների ճնշող մեծամասնությունը կազմում են բուսանունները: Պրանք են՝ ըռազիան (107) < *rāzyāna* «հոռոն սամիթ», քարխուն (68) < *tārxūn*, խաշխաշ (96) < *xāšxāš* «մեկոն», խիար (167) < *xiyār* «վարունգ», կասլա (74) < *kasilā* «դափնի», կանկառ (74) <

kaṅgar «արտիճուկ», ճարասիոն (207) < jarāšion «զանգակածաղիկ», ճուլպան (21) < julbān «տափուլոռ», հայֆարիխոն (55) < hayfārixon, մարխ (41) < marx «մայրի ծառ», մնթուր (42) < mintur «գիշերային մանուշակ», չաման (174) < čamān, սնֆուլ (108) < sinful «նարդոս», սոնիճ (219) < sōnič «արջնդեղ», ֆայու-նիս (77) < fāyunis «քաջվարդ»:

Այս իմաստային խմբի բառերից առավել հաճախակի են գործածվում կասլա (8 անգամ), խիար (12 անգամ), սնֆուլ (7 անգամ), ճուլպան (3 անգամ), բառերը, իսկ քարխուն, խաշխաշ և չաման բառերը երկուական անգամ են վկայված:

2. Տուև, տնային իրեր. ակիշ (213) < āgiš «կրակխառնիչ», ըռաստուխ (222) < raśu-l «այրած պղինձ», լական (80) < lāgān «կոնք, լազան», լիլէ (82) < lila «ըմպանակի բերան», մուստառ (86) < mustār «քաղցու», պլատիկ (194) < balātiğin «փայտե հաստ գավազան», տուրտին (16) < turtin «դիրտ, մրուր», փարչ (82) < pač «կավե աման»: Այս խմբի բառերից և առհասարակ «Գիրք վաստակոցի» փոխառություններից ամենահաճախ գործածական են մուստառ-ը (33 անգամ), և տուրտին-ը (19 անգամ):

3. Հագուստ, կտորեղեն. լաթ (185) < lat «կտոր, շոր», դլեֆ (135) < yalaf «պատանք», չուխայ (104) < čuxa, քթան (119) < kātān «կտավ»:

4. Վիճակ, դրություն, հատկանիշ. դահ (43) < dāh «ծեր, հնացած», քազե (56) < taža «դալար», քափխալիլ (221) < tač-xal «շների չորունքներին դուրս տված բշտիկներ», կեզնել (110) < kiž, gež «ծռել», պահ (220) < bah «հղի», պահնալ (201) «հղանալ», պոզ (199) < bōz «կապտականաչավուն գույն»:

5. Չափ, քանակ. այս իմաստային խմբի բառերը թեև քանակով շատ չեն, բայց աչքի են ընկնում գործածության հաճախակիությամբ: Դրանք են՝ քուխք (108) < tuxi «ծանրության չափ» (վկայված է մեկ անգամ), մարզպան (19) < marzpan «չափի միավոր» (7 անգամ), չարեէկ (107) < čaryek «ամբողջի քառորդ մասը» (3 անգամ):

6. Կենդանիներ. կենդանական աշխարհից արձանագրել ենք ընդամենը երկու պարսկական բառ, որոնք մեկական անգամ են կիրառվել: Դրանք են՝ գամբուռ (191) < zāmbur «պիծակ, իշամեղու», ռահվար (204) < rahvār «քալուկ ծի»:

7. Դեղանյութեր. բժշկության բնագավառին վերաբերող պարսկերեն բառերը կիրառությամբ աչքի չեն ընկնում. Հանդիպում է երկու բառ, որոնք ավելի շուտ դեղանյութերի անվանումներ են և գործածվում են մեկական անգամ: Դրանք են՝ մայայ (31) < māya «մակարդ, մերան», քաֆուր (100) < kāfur «քափուր»:

8. Աստղագիտություն. այս բնագավառից ևս երկու բառ է հանդիպում՝ ծնվզայ (45) < jauza «երկվորյակների համաստեղություն» և շերդային (46) < šarixāyn «գայլի համաստեղություն»:

Ինչպես տեսնում ենք, գործածվող պարսկական փոխառությունների ճնշող մեծամասնությունը գոյականներ են, հանդիպում է միայն երեք ածական՝ քազե, պահ, պոզ և հայերենի բայականական սկզբունքներով կազմված երկու բայ՝ կեզնել, պահնալ:

«Գիրք վաստակոց» երկում կիրառված պարսկերեն բառերի զգալի մասը այսօր էլ գործածական է ժամանակակից հայերենում, ինչպես՝ ակիշ, քարխուն, լաթ, խաշխաշ, կասլա, մարխ, սոնիճ, փարչ, քաֆուր, քթան, իսկ մյուս մասն էլ բարբառներում է գործածվում՝ քազե, լական, լիլէ, խիար, խիարուկ, չուխայ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Ավ. Տեր-Պողոսյան, Բիւղդակական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարը, Եր., 1960, էջ 331:
- ² Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Եր., 2002, էջ 15:
- ³ Տես Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 492:
- ⁴ Տես Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 62:
- ⁵ Տես նույն տեղում, էջ 5:
- ⁶ Ավանդակներ միջին զրական հայերենի պատմության, հ. Ա, Եր., 1972, էջ 224:

А. Тадевосян

ПЕРСИДСКИЕ ЗАИМСТВОВАННЫЕ СЛОВА В ТРУДЕ “ГИРК ВАСТАКОЦ” (“ГЕОПЕНИКА”)

Произведение «Гирк вастакоц» (Геопоника) является одним из образцов средневековой армянской переводной литературы, который служит важным источником для исследования среднеармянского языка. В статье рассматриваются те персидские заимствованные слова, которые употребляются здесь. Они представлены восьмью группами. Из персидских слов, в основном, употребляются термины в области ботаники, соответственно, иные слова, которые относятся к быту, медицине, животному миру, астрономии.

A. Tadevosyan

PERSIAN LOAN-WORD IN THE WORK “GIRK VASTAKOC” (“GEOPONICA”)

“Girk vastakoc” (Geoponika) is one of the examples of Middle Age Armenian's translational literature, which is important source for studying Middle Armenian language. In this article there were studied the Persian loan-words, which are used here. They presented with eight groups. The Persian words in the main mean botanical terms, the words, which refer to medicine, animal word, astronomy, then there are words, which are used in dayly life.